ՀԱՐՑԱՇԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարց 1.
Հայաստանի Հանրապետությունում մարդը՝

Բարձրագույն արժեք է:

(հոդ. 3)

Հարց 2.
Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը՝

Հետադարձ ուժ չունեն:

(հոդ. 73)

Հարց 3.
Հանրապետության նախագահն ընտրվում է՝

Ազգային ժողովի կողմից:

(հոդ. 125)

Հարց 4.
Հանրապետության նախագահն իր հրաժարականը ներկայացնում է՝

Ազգային ժողով:

(հոդ. 142)

Հարց 5.
Ազգային ժողովը կազմված է՝

Առնվազն հարյուր մեկ պատգամավորից:

(հոդ. 89)

Հարց 6.
Ազգային ժողովը՝

Պետական բյուջեն ընդունում է Կառավարության ներկայացմամբ:

(հոդ. 110)

Հարց 7.
Կառավարությունը կազմված է՝

Վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից:

(հոդ. 147)

Հարց 8.
Կառավարության որոշումներն ստորագրում է՝

Վարչապետը:

(հոդ. 153)

Հարց 9.
Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է՝

Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը:

(հոդ. 167)

Հարց 10.
Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են՝

Մարզերը և համայնքները:

(հոդ. 121)

Հարց 11.
Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են ՝

Միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

(հոդ. 162)